ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *«ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆԶՊ ԴԱՍԵՐԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԶԱՀԳԱՅՄԱՆ ՄԵԹՈԴ Է »*

ԱՌԱՐԿԱ՝ ՆԶՊ

ՀԵՂԻՆԱԿ՝ Սանթրյան Օլեգ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ՀՀ Սյունիքի մարզի Դարբասի միջ.դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Հրայր Գրիգորյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կեղծ է ամեն մի գրականություն, բարոյական ու քաղաքական վարդապետություն, որ ուժ և արիություն չի ներշնչում իր դավանողին:**ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ**

Թեմա փոխհարաբերությունների հմտությունների համագործակցություն, ներդաշնակություն, համախմբվածություն:Կատարելով ուսումնասիրություններ եռամսյա ուսումնավարժական հավաքների ժամանակ հաճախախակի հանդիպել եմ երիտասարդ սերնդի մտածելակերպի ոչ համապատասխան վարվելակերպին: Կարողությունների,հմտությունների և ունակությունների ոչ լիարժեք դրսեվորումների պաճառը՝նոր ժամանակներին վերափոխվելու և Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կարողությունների զարգացման իրացնելու խնդիրն է զորակոչիկների համար՝ ծառայության անցնելու առաջին օրվանից:Հիմնական խնդիրը կայանում է նորակոչիկների և առդեն ծառայության մեջ գտնվող զինվորների առավել առդյունավետ համագործակցական արժեքայինվ որակների համագործակցության մեջ;Դրանք են հմտությունների,կարողությունների և ունակկությունների համագործակցությունը ՝ առանց հոգեբանական կաշկանդվածության: Ներկայիս կրթության հիմնախնդիրներից մեկը՝ դա տարբեր տարիքային խմբերի աշակերտների առդյունավետ համագործնեությունն է՝ միասնական արժեքային թեմայի շուրջ,որի համար պետք է տարվեն աշխատանքներ՝ ուսուցման ավանդական մեթոդների վերանայման և որոշակի փոփոխություններ կատարելու համար, արդի ժամանակաշրջանում հրատապ լուծման կարիք ունենե:Կարողանալով կարգավորել հոգեբանական ճիշտ մոտեցումը տարբեր տարիքային խմբերի մեջ դպրոցում,այն օժանդակում է բանակում զինվորների փոխհարաբերությունների առավել առդյունավետ արմատական փոփոխությունը դեպի լավը:Դա տալիս է համարժեք մոտեցուներ հարաբերությունների, արժեքային կողմնորոշումների և նախասիրությունների համար: Որը իր հերթին նպաստում է հայրենասիրությանը և Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կարգապահության բարձացմանը:Հայաստանի Հանրապետության կրթական համակրգում փոփոխությունների անհրաժեշտությունը արդի ժամանկահատվածում խիստ անհրաժեշտ միջոցառում է,հատկապես ՆԶՊ առարկայի նկատմամբ՝հաշվի առնելով տարածաշրջանի բարդ ռազմաքաղաքական իրավիճակը: Այս

նոր իրավիճակը՝ նոր մոտեցումներ է պահանջում, ելնելով անձնական հետազոտման փորձի հիման վրա՝զինվորների փոխհարաբերությունների սկզբնական ձևավորման հիմքը դպրոցում գործնական համատեղ պարապմունքների և միջոցառումների ավելացման շնորհիվ կբերի հետագա փոխահարաբերությունների արդյունավետ հոգեբանական պատրաստվածության: Այսօրինակ հարցերի քնարկումը դպրոցում համատեղ պարապունքների ժամանակ, կոնկրետ կհեշտացնի զինվորական ծառայության ընթացքում՝կոնկրետ տարբեր հոգեբանական և արագընթաց փոփոխությունների իրավիճակների լուծմանը:

Նպատակին հասնելու համար իմ խնդիրներն են՝

- 12-16 տարեկան աշակերտների անկաշկանդ փոխհարաբերությունների ներդաշնակություն վերլուծում
- 12-16 տարեկան աշակերտների փոխհարաբերությունների կարգավորման մասնագիտական մեթոդի կիրառում/տարբեր/
- 12-16 տարեկան աշակերտների փոխհարաբերություններ պարզաբանումը ՆԶՊ դասերին
- 12-16 տարեկան աշակերտների փոխհարաբերություններ արժեքյին համակարգի

ձևավորման գործընթացի գիտակցական մոտեցումը և յուրացումը:

- Հետազոտումը դպրոցում համատեղ դասերի ժամանակ
- մեթոդները՝ ձնագնդիկ,մտքերի տարափ, համագործակցային

Վեննի դիագրամը կառուցվում է երկու շրջանագծերով, որոնք կենտրոնում ունեն հատման մակերես: Այդ դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով:

- խթանել, սովորեցնել, բարելավել, աջակցել, լրացնել, ավելացնել, զարգացնել, որակը բարձրացնել,
- ուժեղացնել, միավորել, համախմբել, համակարգել, կապակցել, կատարելագործել,

https://drive.google.com/file/d/1ahRnJqCjLDuQcLckDITZlDr9yEy261KP/view

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Լ.Ս. Վիգոտսկին էլ ձևակերպել է մի օրենք , որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ գործունեության ընթացքում են զարգանում խնդիրները միասին լուծելուկարողությունները, և ամենակարևորը՝ ինքնուրույն իմացական գործունեությունը, շահագրգռվածություն ցանկացած խնդիր վերլուծելու և հանգուցալուծելու համար:

12-16 տարեկան պատանիները առանձնահատկությունը անձնական անկայունությունն է: Հակադիր գծերը, ձգտումները, միտումները գոյակցում են միմյանց հետ՝ պայմանավորելով բնավորության և վարքի հակասականությունը:

Մեծահասկաներին ընդօրինակումը, որը չի սահմանափակվում միայն շարժուձևով և հագուստով: Ընդօրինակումն ընթանում է և զվարճանքների, ռոմանտիկ հարաբերությունների ուղով: Այդ հարաբերությունների բովանդակությունից անկախ՝ վերցրվում է «մեծահասկաի ձևը». ժամադրություններ, սիրային նամակներ և այլն:

Չափահասության արտաքին, օբյեկտիվ դրսևորումների հետ մեկտեղ ի հայտ է գալիս նաև չափահասության զգացում՝ ինքն իր նկատմամբ՝ որպես մեծահասակի, վերաբերմունք, ինքն իրեն որպես մեծահասակի զգացում, պատկերացումը: Չափահասության այս սուբյեկտիվ կողմը համարվում է կրտսեր դեռահասության տարիքի նորագոյացությունը:

Չափահասության զգացումը կապված է վարքի բարոյական նորմերի հետ, որոնք յուրացվում են հենց այս ժամանակ: Ի հայտ է գալիս բարոյական «կոդեքսը», որը դեռահասներին վերագրում է վարքի հստակ ոճ ընկերական հարաբերություններում:

Ըստ Դ. Էլկոնինի դիտարկման՝ չափահասության միտումը դեռահասների մոտ՝ ձգտում՝ լինելու, երևալու և համարվելու մեծահասակ: Ուրիշի աչքերում մեծ երևալու ցանկությունն ուժեղանում է այն ժամանակ, երբ արձագանք չի գտնում շրջապատողների մոտ: Միևնույն ժամանակ կան դեռահասներ, որոնց մոտ վառ արտահայտված չէ այս միտումը, նրանց մեծահասակի պահանջները դրսևրվում են էպիզոդիկ, առանձին անբարենպաստ

պայմաններում, նրանց ազատության, ինքնուրույնության սահմանափակման դեպքում:

Կարևոր է և այն հանգամանքը , որ ինքնուրույնության, չափահասության արտաքին թվացող կողմը, թե անհրաժեշտ է իրական, խորքային ինքնուրույնություն: Այս գործընթացի վրա էականորեն ազդում է երեխայի հարաբերությունների համակարգը. ծնողների, ուսուցիչների, հասակակիցների կողմից նրա չափահասության ընդունումը:

Մոտավորապես 11-12 տարեկանում հետաքրքրություն է առաջանում սեփական ներաշխարհի նկատմամբ, այնուհետև տեղի է ունենում ինքնաճանաչողության աստիճանական բարդացում և

Հենց այս տարիքում է երեխաների մոտ առաջանում ակտիվ, ինքնուրույն, ստեղծագործական ճանաչողության պահանջմունքը: Սկզբունքորեն, այն կարող է իրացվել և ուսումնական գործունեության մեջ: Ըստ Դ. Էլկոնինի՝ կրտսեր դեռահասության տարիքը սենզիտիվային է ավելի բարձր մակարդակի ուսումնական գործունեության անցնելու համար: Երեխայի համար ուսումը կարող է ձեռք բերել նոր անձնային իմաստ՝ դառնալու ինքնակրթության և ինքնակատարելագործման գործունեություն: Դժբախտաբար, դա հաճախ չի դրսևորվում: Այս ուղղությամբ դեռահասի հետաքրքրությունները ղեկավարել կարող են ծնողները, սիրելի ուսուցիչները: Դեռահասին այլ, լրացուցիչ զբաղմունքների դրդելու համար պետք է գործել շատ զգույշ. ավելորդ ճնշումը նրանց կողմից կհանգեցնի հակադիր ռեակցիաների՝ ինչ-որ բան անելու ցանկության բացակայության, ապատիայի:

Այս տարիքի տղաների մոտ ընկերությունը բարդ, հաճախ հակասական երևույթ է: Նամ գտում է մոտ, հավատարիմ ընկերոջ, բայց անընդհատ փոխում է ընկերներին: Սովորաբար նա ընկերոջ մեջ փնտրում է նմանություն, սեփական ապրումների և դիրքորոշումների ըմբռնում և ընդունում: Լսելու և ապրումակցելու ունակ ընկերը դառնում է յուրօրինակ հոգեթերապևտ: Նա կարող է ոչ միայն օգնել լավ հասկանալու ինքդ քեզ, այլև

հաղթահարելու սեփական անվստահությունը, բազմաթիվ կասկածները, զգալու ինքդ քեզ որպես լիարժեք անձ: Եթե ընկերը, զբաղված լինելով իր սեփական գործերով, անուշադրություն դրսևորի կամ այլ կերպ գնահատի իրավիճակը, միանգամայն հնարավոր է հարաբերությունների ընդհատում: Այս դեպքում դեռահասն իրեն միայնակ զգալով, նորից կսկսի փնտրել իդեալ և ձգտել առավել ամբողջական հասկացման. որի դեպքում, չնայած ամեն ինչին, իրեն սիրում են և արժևորում:

Այս տարիքում մոտ ընկերները, որպես կանոն, հասակակիցներ են, նույն սեռի, սովորում են նույն դասարանում, պատկանում են միևնույն սոցիալական միջավայրին:

Նրանց շփման շրջանակը չի սահմանափակվում միայն մոտ ընկերներով, ընդհակառակը, այն բավական ընդլայնվում է՝ ի տարբերություն նախորդ տարքիների: Այս ժամանակ երեխաներն ունենում են շատ ծանոթներ, և որ ամենակարևորն է, ձևավորվում են ոչ ֆորմալ խմբեր:

Խմբի զարգացման չափանիշներից են.

- Նպատակների, դրդապատճառների, խմբի անդամների արժեքային կողմնորոշումների միասնությունը, որը պայմանավորում է նրա բարոյական ուղղվածությունը:
- Կազմակերպչական միասնությունը,
- Գործունեության որոշակի ոլորտի խմբային պատրաստվածությունը
- Հոգեբանական միասնությունը:

Վերջինս իրավունքի և իրավունքի հոգեբանության հետ առնչվում է այնքանով, որքանով վերաբերում է կոնկրետ հանցածին վարքին և գործունեությանը: Սովորաբար, շեշտվում է այն հանգամանքը, որ դեռահասության տարիքում՝ սեռական հասունության պայմաններում, անձի ֆիզիկական, կենսաբանական ինտենսիվ փոփոխությունները հանգեցնում են

հոգեբանական նորագոյացումների: Առհասարակ դեռահասության տարիքը ընդունված է համարել դժվար շրջան, քանի որ այս տարիքում են ձևավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և առհասարակ առաջնային արժեքների համակարգը, նախնական բլոկը: Ապացուցված է նաև, որ դեռահասի վարքը հաճախ անկառավարելի է դառնում այն պատճառով, որ տարիքային առանձնահատկության հետ կապված նրանց վարքագծում գերակշռում է հուզական ֆոնը: Դեռահասի տարիքային սահմանների շուրջ մասնագիտական բուռն բանավեճեր են ծավալվել, սակայն այսօր մասնագետների մեծ մասը հակված է այս շրջանը վերագրել 12-16 տարեկան: Դեռահասի պարագայում անհրաժեշտ է հիշել, որ ֆիզիկական տվյալներով չափահասից չտարբերվող, սակայն հոգեբանորեն ավելի ցածր զարգացման մակարդակի վրա գտնվող անձի մասին է խոսքը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ սեռական հասունության էտապում մարդու ֆիզիկական զարգացումը աննախընթաց արագ աճ է արձանագրում, իսկ հոգեբանական առումով նրա զարգացումը պահանջում է ավելի շատ ժամանակ:

Այս շրջանում անչափահասն սկսում է ակտիվորեն վերաիմաստավորել իր նախկին մոտեցումները, փորձում է դուրս գալ ավագ հարազատների ազդեցության ոլորտից, սկսում է հաճախ նրանց հակառակվել, նկատել նրանց մեջ բացասական գծեր, որոնք մինչ այդ չէր նկատում, ձգտում է անկախության, ինքնուրույնության և ինքնահաստատման, մյուս կողմից նրա համար շատ ավելի արժեքավոր է դառնում իր տարեկիցների կարծիքը, փորձում է հարմարվել նրանց կողմից ընդունված նորմերին և հաստատվել իր տարեկիցների միջավայրում:

Նորակոչիկի , վաղ դեռահասության շրջանում անձի մեջ առաջացնում է տարբեր բնույթի ներքին և արտաքին հակամարտություններ: Գործունեության ընթացքում նրա օրգանիզմը մշտապես գտնվում է ծայրաստիճան լարվածության, մոբիլ վիճակում և յուրահատուկ դժվարությունների տևական այդպիսի ազդեցությունների պայմաններում 31 նրա հոգեկան համակարգությունը, մոտիվներն ու դիրքորոշումները ենթարկվում է սոցիալ-հոգեբանական, ֆիզիոլոգիական լուրջ փոփոխությունների, որոնց արդյունքում տուժվում են ոչ միայն նրա գործունեության արդյունավետությունը, այլև փոփոխություն են կրում նրա անձի հոգեկան, կենսաբանական համակարգությունների գործառութային հնարավորությունները : Ժամանակի ընթացքում առաջանում է բնավորության շեշտավորվածություն, ֆրուստրացվածություն, օրգանական հյուծվածություն: Գործունեության արդյունքում

առաջացող նմանատիպ փոփոխությունները հանդիսանում են առանձնահատուկ, դժվար, արտակարգ գործոնների ազդեցության հետևանք, որոնք իրենց բնութագրերով բնորոշ են գործունեության արտակարգ պայմաններին: Դրանց արդյունավետությունը պայմանավորված է անձի հոգեկան գործընթացների, հոգեվիճակների, մտավոր գործողությունների ճիշտ և ժամանակին կարգավորմամբ, նրանց ընթացքի վերահսկմամբ, օրգանիզմի ընդհանուր դիմադրողականությամբ և սթրես գործոնների նկատմամբ արգելքադիմացկունությամբ, հոգեկան բարձր հուսալիությամբ: Հոգեբանական գրականության մեջ քննչական գործունեությունը որակվում է որպես առանձնահատուկ մտավոր ու հոգեկան լարվածությամբ հագեցած միջավայր, գործունեության բարդ բնագավառ : Այն իր կառուցվածքով ու բովանդակությամբ մոտ է արտակարգ պայմաններին: Հիանդիպում ենք նաև «հատուկ, դժվարեցված, անսովոր» իրավիճակների:

Համակարգի տարրերը, ըստ Պ.Անոխինի, ձևավորվում են տարածության և ժամանակի մեջ այնպես, որ նրա կառուցվածքը - մորֆոֆիզիոլոգիական գործընթացները, որոնք ընթանում են ամբողջական համակարգի սահմաններում, հնարավորություն ունեն կենսահամակարգի համար ապահովել գլխավոր գործառույթի իրականացումը, այն է՝ միջավայրի հետ փոխներգործության ժամանակ նրա պահպանումը և զարգացումը: Կենսահամակարգի և միջավայրի համագործակցության ժամանակ այդ արդյունքի ստացման հնարավորության ապահովումը, հանդես է գալիս, որպես համակարգ առաջացնող գործոն:

Հասարակության մեջ անձի ունեցած տեղի ու դերի հարցում կարևորագույն տեղ է ղբաղեցնում նրա պատասխանատվության զգացումը: Գրականության մեջ տարբերակում են քաղաքական, իրավական, բարոյական, մասնագիտական և պատասխանատվության այլ դրսևորումներ (ծնողական, նյութական, քրեական և այլն): Սոցիալական պատասխանատվությունը արտացոլում է անձի վարքագծում նրա ուղղվածությամբ, հանդեպ հասարակության կողմից ընդունված սոցիալական նորմերի, դերերի և պարտավորությունների:

Ինչպես հայտնի է անձը հանդիսանում է հասարակական հարաբերությունների արդյունք: Հասարակության յուրաքանչյուր անդամ օժտված է որոշակի իրավագիտակցությամբ: Իրավագիտակցության տակ հասկացվում է անձի ողջ վարքագծի իրավական փորձը: Այն արտացոլում է հասարակական հարաբերությունները, որոնք կանոնակարգվում կամ պետք

է կանոնակարգվեն իրավական նորմերով, բանակում այն կանոնակարգվում է ,,Զինապարտության մասին օրենքով teghekagir_nor.pdf (aspu.am)

Ըստ հոգեբաններ ԿՈՆՍԵՆՍՈՒՍ Վ.Ա.ՄԱԶԻԼՈՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ.

Պետք է փորձել հասկանալ՝ ինչու է այդպես լինում և ինչու ակադեմիական գիտելիքները չեն բավարարում «գործնական» հարցադրումներին: Ակադեմիական և գործնական հոգեբանության մեջ չկա պարադիգմային հակադրություն. Սա դիմակավորված «դասական» մրցակցություն է բնագիտական և հերմենեֆտիկական պարադիգմաների միջև:

Աշակերտների հետ կատարված հետազոտությունը

Կոլեկտիվը դա կազմակերպված մարդկանց նպատակասլաց կոմպլեքս է: Որտեղ կա կոլեկտիվ այնտեղ կա վստահություն անձանց կազմակերպություն՝ ընկերասիրություն, բարեկամություն, կարողությունների հմտությունների և ունակությունների ներդաշնակություն:

Մակարենկո

Ծառայությանը պաճառ՝ նոր ժամանակներին վերափոխվելու և Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կարողությունների զարգացման իրացնելու խնդիրն է զորակոչիկների համար՝ ծառայության անցնելու առաջին օրվանից:Հիմնական խնդիրը կայանում է նորակոչիկների և առդեն ծառայության մեջ գտնվող զինվորների առավել առդյունավետ համագործակցական արժեքայինվ որակների համագործակցության մեջ;Դրանք են հմտությունների,կարողությունների և ունակկությունների համագործակցությունը՝ առանց հոգեբանական կաշկանդվածության:

Ներկայիս կրթության հիմնախնդիրներից մեկը՝ դա տարբեր տարիքային խմբերի աշակերտների առդյունավետ համագործնեությունն է՝ միասնական արժեքային թեմայի շուրջ,որի համար պետք է տարվեն աշխատանքներ՝ ուսուցման ավանդական մեթոդների վերանայման և որոշակի փոփոխություններ կատարելու համար, արդի ժամանակաշրջանում հրատապ լուծման կարիք ունենե:Կարողանալով կարգավորել հոգեբանական ճիշտ մոտեցումը տարբեր տարիքային խմբերի մեջ դպրոցում,այն օժանդակում է բանակում զինվորների փոխհարաբերությունների առավել առդյունավետ արմատական փոփոխությունը դեպի լավը:Դա տալիս է համարժեք մոտեցուներ հարաբերությունների, արժեքային կողմնորոշումների և նախասիրությունների համար: Որը իր հերթին նպաստում է հայրենասիրությանը և Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կարգապահության բարձացմանը:Հայաստանի Հանրապետության կրթական համակրգում փոփոխությունների անհրաժեշտությունը արդի ժամանկահատվածում խիստ անհրաժեշտ միջոցառում է,հատկապես ՆԶՊ առարկայի նկատմամբ՝հաշվի առնելով տարածաշրջանի բարդ ռազմաքաղաքական իրավիճակը: Այս նոր իրավիճակը՝ նոր մոտեցումներ է պահանջում, ելնելով անձնական հետազոտման փորձի հիման վրա՝զինվորների փոխհարաբերությունների սկզբնական ձևավորման հիմքը դպրոցում գործնական համատեղ պարապմունքների և միջոցառումների ավելացման շնորհիվ կբերի հետագա փոխահարաբերությունների արդյունավետ հոգեբանական պատրաստվածության: Այսօրինակ հարցերի քնարկումը դպրոցում համատեղ պարապունքների ժամանակ, կոնկրետ կհեշտացնի զինվորական ծառայության ընթացքում՝կոնկրետ տարբեր հոգեբանական և արագընթաց փոփոխությունների իրավիճակների լուծմանը:

teghekagir_nor.pdf (aspu.am)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ
ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆԶՊ ԴԱՍԵՐԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԶԱՀԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴ Է

Համագործակցային հմտությունների հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ համագործակցային հմտությունները մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Ահա թե ինչու համագործակցային հմտությունները հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Համագործակցային հմտությունների ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, ձևավորման առումով չափազանց մեծ է ՆԶՊ ուսումնական առարկաի դերը:

Համագործակցային հմտությունների մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի համագործակցային հմտությունների գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելո բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների համագործակցային հմտությունների ձևավորումը սեփական գիտելիքների հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև անհատականություն:

Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլնաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն,որոնքել ազդում են համագործակցային հմտությունների հետագա ընթացքի վրա ,**ծառայության առաջին օրվանից:**

Աշակերտի համագործակցային հմտությունների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:

Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»[1]: Աշակերտի համագործակցային հմտությունների ձևավորման վրա ազդող գործոնը տարիքայինն է:

Երբ սովորողի կողմնորոշումները, նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ համագործակցային հմտությունների դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»[2]:

Սովորողի անձի համագործակցային հմտությունների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը մի ջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ **սովորողի անձի շփման տարիքային ճիշտ դաստիարակության վրա:** Հետևաբար համագործակցային հմտությունների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի համագործակցային հմտությունների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝

[1] Տես՝ Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ:

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Համագործակցային հմտությունների մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ՆԶՊ դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի համագործակցային հմտությունների դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու

կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների համագործակցային հմտությունների դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ[4]:

• Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ինտեգրման տեսակը՝ Համագործակցային հմտություններ

Առարկան՝ ՆԶՊ

Դասարաններ՝ 8-ից 12-րդ

Ամիս, ամսաթիվ՝ 09. 08. 2022թ.

Տևողությունը՝ 90 րոպե

Թեման՝ **փոխհարաբերությունների հմտությունների համագործակցություն, ներդաշնակություն, համախմբվածություն**

1.Ակադեմիական նպատակը.

- Ցածր և բարձր դասարանի աշակերտների փոխհարաբերությունների համգործակցությունը,
- հմտությունները վերածելու կարողունուկության

2. Միջոցները.

- Առաջադրանքը մտքերի տարափ,գաղափարների,տեսակետների հետ կապված
- Աշակերտեների ներգրավելը,շփումը հեշտացնելու և ազատ զգալու ավագների ներկայությամբ

3. Դասասենյակի դասավորությունը.

- Շրջանաձև նստած աշակերտներ,հավասարության զգացման համար
- կենտրոնում դիտակտիկ տարբեր պաստառներ
- նպատակը ստեղծել միջավայր, ավագների հետ շփվելու փորձառություն

4. Համագործակցական խմբերի նպատակը.

- Խմբային աշխատանք կատարելու հմտություններ:
- Հմտությունները վերածելու կարողունակության:
- Հիմնական գաղափարների բացահայտում:
- Փոխհարաբերությունների ներդաշնակություն,համխմբվածություն

5. Բացատրել հաջողության հասնելու չափանիշները.

- կարողանալ դիմացինին լսել և կարգավորել մտքերը
- կարողանալ ճիշտ բացատրել և ըմբռնել

6. Դասի ընթացքը.

Ջերմացում

- Խթանող հարց՝

ՀՀ ԶՈՒ անրաժեշտությունը,ՆԶՊ առարկայի դերը

- Կիրառել Մտագրոհ մեթոդը,ընթացքում ստեղծելով միջավայր աշակերտների կարծիքների արտահայտում և իրար հետ քնարկում

7. Վերահսկում և միջամտում.

- հետևել համագործակցությամբ աշխատելու կանոններին:

8. Առաջադրանքի ներկայացում.

- խոսնակը ներկայացնում է տեսակետը, իսկ անդամները հայտնում իրենց համաձայնությունը կամ այլ տեսակետը

9. Գնահատում(1-2 նմանատիպ դասերից զգալ փոփոխությունը).

- Խմբային քնարկման գնահատման (ռուբրիկ) սանդղակ.

10. Անդրադարձ.

- Նախատեսված ո՞ր մասը հաջողվեց և չկատարվեց:
- Ի՞նչ կարելի է ավելացնել:

Ուսուցիչ.՝ Օ.Սանթրյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել,որ **փոխհարաբերությունների հմտությունների համագործակցություն, ներդաշնակություն, համախմբվածությունը** ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի ԶՈՒ-ի համար: Խոսքը գնում է նորակոչիկների և արդեն ծառայության մեջ զինվորների փոխհարաբերությունների ներդաշնակություն համակարգի ձևավորման մասին ՆԶՊ դասերին:

Հմտությունների փոխհարաբերությունների համագործակցության ձևավորման և նրա հարաբերական հաջողության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ ՆԶՊ առարկան:

Դպրոցում սովորողները ՆԶՊ ծրագրի շրջանակներում ծանոթանում են զինվորական այբուբենին, նրա անհրաժեշտությանը,զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և պատմական նվաճումներին, ինչպեսնաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: ՆԶՊ առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային բանակի դերը, կանոնակարգված զինվորի մտածելակերպ ունեցող, հայկական ԶՈՒ-Ի դերը պետականության և անկախության համաշխարհային պատմության համատեքստում, հայ զինվորի համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով հմտությունների փոխհարաբերությունների համագործակցության համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես զինվոր՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Այս գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը պաշպանելը՝ սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է,որ կրթության հմտությունների փոխհարաբերությունների համագործակցության իմաստը պետք է

դառնա կարևոր ձևավորում, վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի

նպատակահարմարություն, փոխհարաբերությունների համագործակցության գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային- հասարակական կարևորության խնդիր, որովհետև փոխհարաբերությունների համագործակցության պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Ակնարկ՝ հետազոտական աշխատանքի ընթացքում հաջողվեց մասամբ կարգավորել հմտությունների փոխհարաբերությունների համագործակցությանը՝ ընթացքը ցույց տվեց,որ աշակերտների միայն 70-80% մոտ հաջողվեց կարգավորել հարաբերությունները,10% մոտ նկատվեց լարվածություն,10% մոտ էական փոփոխություն չնկատվեց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առարկայական չափորոշիչներ. https://escs.am/am/search
2. Հանրակրթության պետական չափորոշիչ. https://www.arlis.am/documentview
3. https://drive.google.com/file/d